

## ԴՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ ԳՐԻԳՈՐ ՇՎԹԱՑԱԿՐԻՑ

**Գ**րիգոր Շիրվանցին, որ 1715 թ. երուսաղեմի պատրիարք ընտրվելով ավելի է հայունի դարձել Շղթայափիր մականունով, անգամ ատելի ծառայություններ է մատուցել երուսաղեմի աթոռին, իր եռանդում ջանքերի շնորհիվ նրա ծանրաբեռնված պարտքերը մաքրելով, որով և նշանավոր անուն է թողել պատմության մեջ:

Այս ականավոր մարդու կյանքի մասին նախքան նրա պատրիարքությունը՝ մինչև այժմ գրեթե ոչինչ ծանոթ չի եղել մեղ պատմական գրականության մեջ բացի այն դույզն տեղեկություններից, թե նա Ամբողջի միաբան էր և պատիարքության կոչվելուց առաջ եղել էր Գրակի, առն է՝ Մուշի Ս. Կարապետի վկանահայր։ Ավագայն Զայկ։ ՍՍՌ Պետական Մատենադարանի գրչագրերում կան անտիպ նյութեր, որոնք ո՛չ միայն լույս են սփռում այս անվանի հասարակական գործի կյանքի այդ անծանոթ շրջանի վրա, այլև ցույց են տալիս, որ նա այդ շրջանում տվել է նաև մի շարք գրական արտադրություններ։

Նպատակ ունենալով ի մի ամփոփել և առաջիկայում հրատարակել Գրիգոր Շղթայակրին վերաբերող այդ նյութերը, որոնք, համոզված ենք, մեծ շահճեկանություն կներկայացնեն մեր մտավորական համար և կամաց համար, այս անբամին ուշադրության ենք հանձնում նրա գրչին պատկանող երեք տաղեր, որոնք միամնաբար մի առանձին խումբ են կազմում նրա թողած գրական երկերի մեջ, իրենց ներկայացրած լեզվական և ոճական առանձնահատուկ նկարագրություններ։

Հիշյալ երեք տաղերը գտնվում են Հայկ։ ՍՍՌ Պետական Մատենադարանի № 737

Ճեռագրում։ Հեղինակի մյուս արտադրությունների նկատմամբ այս երեք կտորների ներկայացրած առանձնահատկությունն այն է, որ սրանք գրված են խրթին լեզվով։ Գրիգոր Շիրվանցին, ցանկանալով նմանող ընել իր հոչակապոր առևլանալեցին՝ Գրիգոր Մագիստրոսին, որը, իմշակես հայտնի է, նույնական խրթնարան գրվածքներ է թողել ՏԻ դարից, լայն չափերով արտասովոր բառեր է գործածել այս տաղերի մեջ, ինչպես և իրուսի ԷՌ տաղել նրա գործածած չափերը։ Բայց այս տաղերի լուծումը այնպիսի մեծ դժվարություն չի ներկայացնում, ինչպես ներկայացրել են Գրիգոր Մագիստրոսի գրվածքները, որովհետեւ այստեղ օգտագործված խրթին բառապաշարի հիմնական մասը երեմիս վարդապետի բառարանից է։ մնացածը բաղկանում է հայերեն լեզվի թեև ընդհանրապես արտասովոր, բայց ծանոթ բառերից։ իսկ մի քանիսը ուղղակի հունարենից են առնված։

Գրիգոր Շղթայակրի այս տաղերը գրական տեսակինություն թերմա աշքի ընկնուող մի արժեք չունեն, թեև այնտեղ պատկաս չեն գեղցիկ ու հաջող պատկերներ, փոխաբերություններ, գրաբարձրներ, որոնք հեղինակի գրական կիրթ ճաշակն են արտահայտում։ Բայց այս տաղերի իրական արժեքը նրանց բովանորդակության մեջ է, որը պատմական է։

Առաջին երկու տաղերը ներբողներ են, նվիրված՝ ոմն Հովհաննես Փաղեղբարի (Հովհաննես վարդապետի)։ Արդ անունը մեղ հայտնում են առաջին տաղի տների սկզբնաւաները, որոնք հուդում են։ ԺՏ Յոհաննէս Փաղերայ, Գրիգորիսն է քո ծառար։

Նույն տաղի վերջին տները մեզ տալիս են և տաղի հորինման թվականը։

«Այս ծիր ի թիւ միջի գորով եղիւ ծըրբաւլ։ Երկ և մու թըսով յանկիւ առաւելեալ։

Յօգուստոսի Հընկիւ հընգեակ ատուրքք շափեալ,

ՅԱկրոդիտեայ օրն վեցշաբթի բօթ անուանեալ:

Որ է՝ 1694 թ. օգուստոսի 10-ին, ուղրաթ օրը<sup>1)</sup>:

Ո՞վ է հիշյալ Հովհաննես Փաղերան:

Այդ անոնավով նշանափոր անձնավորություն մենք չենք տեսնում Ամրոտի վանքում, որտեղ գտնվում էր այդ ժամանակ տառի հեղինակը: Եվ առհասապակ այդ առոնով աշքի ընկնող անձնավորության շենք հանդիպում այս շրջանում հայ Հովհաննականության մեջ, բացի Հովհաննես Կոստանդնուպոլսեցի վարդապետից, որը երուսալեմի պատրիարք էր: Կարո՞ղ են առդյոք Գրիգոր Շղթայակրի այդ երկու ներբողականները նվիրված լինել այդ անձին, որի անհասական և հասարակական արժանիքները շատ սակավ են ծանոթ այլուատ: Եթե այս, ապա մենք այս տաղերով կստանանք ստույգ ծանոթություններ Հովհաննես Կոստանդնուպոլսեցու անձնավորության մասին և հենց դրանով էլ այս տաղերը կունենան պատմական լուրջ արժեք:

Վերլուծելով երկու ներբողանների բովանդակությունը, մենք տեսնում ենք, որ նրանք իսկապես նվիրված են երուսալեմի պատրիարք Հովհաննես Կոստանդնուպոլսեցուն: Հեղինակը խոսքն ուղղելով իր գովարանած անձին, ասում է:

«Նադարի դշիոյին նադամեցեալ.

Շահապետ գանձուց նորին զքեզ կարգեց եալ» (Ա, 2):

Այսինքն թե՝

«Դու հարսնացած սուրբ դշիոյին հաճու յանալով,

Նա քեզ պետ. (կամ իշխան) կարգեց իր գանձերին»:

Այստեղ այլաբանութեն նշվող հարսնացած սուրբ դշիոն՝ Երուսալեմն է, որի գանձերին, այլինքն՝ ազգային հարստություններին և պատրիարքական աթոռին տեր է կարգվել գովարանվողը:

1) Թիվ սմիջի», թվական արեներութ 200+20+900+20=1140

Թիվ «երկ և մուն» 2+1= 3

Քրիստոնեական թվականի տարրերությունը՝ 551 1694

Օգոստոսի սհմկիւ հընգեակքը, այն է՝ 5+5, կինի 10, ֆէլ իսկապես 1694 թիվ օգոստոսի 10-ը ընկնում է ուրբաթ օր, որ հեղինակն անվանում է սկեցշաբթիւ: (Տե՛ս նաև բնագրի համապատասխան մասի ծանոթաբությունները):

Հեղինակը նրան տալիս է նաև մի շարք վերաբիրները, որոնք բացացած են դարձնում այդ և հաստատում: Այսպես՝ նա երկու անգամ նրան անվանում է սեղենիտարը (Ա, 3, Բ, 12): Հոմարինից առնված սեղեն կամ սեղին բառը (սելլուց «պահ», աթոռ») նշանակում է «պատրիարքական աթոռ, առաջնորդական գանձ»: Պատրիարքական աթոռությամբ, նշանակում է «պատրիարքական առաջնորդական աթոռի տեր, պատրիարք, առաջնորդ»: Հեղինակը նրան անվանում է նաև նակերտ «Հովհապետ» (Ա, 1) ևի «դիտապետ» (Ա, 15), կանիս պետ, «սուրբ պետ» (Ա, 25, Բ, 12), էապատուեալ, «առաջնորդի պատիվ՝ աստիճան ունեցող» (Ա, 10), բարձրագույն առջեր (Ա, 8), գերամաքուր և հոգելի տէր (Ա, 13), և այլն:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Հովհաննես Փաղերան Երուսալեմի հայոց պատրիարքներից մեկն է և, հնուարար, նույնինքն Հովհաննես վարդապետ Կոստանդնուպոլսեցին է: Այս նույնացումը ավելի է ամրանում, եթե մենք ներբողագրի կողմից բերված որոշ նշուաններ գամ ակնարկություններ համեմատության դնենք Հովհաննես վարդապետ Կոստանդնուպոլսեցու պատրիարքության պատմության որոշ անցքերի հետ:

Հովհաննես Կոստանդնուպոլսեցին, որ նույնացի մականումն էր կրում և Աստվածատուր Տագոննեցու աշակերտն էր, Երուսալեմի պատրիարք է եղել 1685 թ. և մահացել 1694 թ.<sup>1)</sup>, կամ 1697 թ.<sup>2)</sup>:

Հովհաննես Կոստանդնուպոլսեցին փր պատրիարքության սկզբնական շրջանում տնաբույս հակառակորդներ էր ունեցել իր իշխանության դիմում ինչպես կարդում ենք նրա դիմ ասնապակաս էին հակառակութիւնք ունաց, դիհանապակալ նիւթէին նմա շարփս, լրնկենով զնա յափուոյնա<sup>3)</sup>: Այսպիսիներից մեկն էր եղել ուն Սիմոն եպիփառպատրիարքութեան Երուսալեմի, ...և եկեալ ի բաց վարեաց անտի զծովհաննես և լինքն կալաւ զաթուն զամս իբր 4», բայց «ապա ընկեցալ յափուոյն հնարիւք նախորդին իւրոյց<sup>4)</sup>: Վանելով, ուրեմն, իր հակառակորդին՝

1) Բառնաբաս Վրդ. Դանձակեցի, Յաջորդութիւն պատրիարքացն Երուսալեմի, 4, Պոլիս, 1872 թ., էջ 57:

2) Աստվածատուր եպսկ. Տեր-Հովհաննեսեանց, ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսալեմի, Հռ. Ա, Երուսալեմ, 1890 թ., գլ. 414:

3) Անդ, էջ 404:

4) Անդ, էջ 405:

Հովհաննես Կոստանդնուպոլիսիցին վերականգնել էր իր իշխանությունը և վերաբազմել իր գահի վրա 1691 թ., մեր ներբողների թվականից երեք տարի առաջ, Այս դեպքին են ակնարկում հետևյալ բառերը.

«Տարում» ի տարիքոնդ վերաբազմեալ (Ա, 1):

Այսինքն՝

«Տարաբուն եղած (հալածված), բայց դարձաւ գահիդ վերաբազմած»<sup>1)</sup>:

Մենք այնտեղ ուրիշ արձագանքներ էլ ենք գտնում Հովհաննես Կոստանդնուպոլիսիցու գործունեությունից: Այսպես նա Կ. Պոլսից կայսերական հրովարտակ բերել տակով կարուր վերաբազմություններ էր կատարել Ս. Փրկչի վանքում, որը քաղաքի պարիսպներից դուրս էր գտնվում: Բայց, ըստ սովորության, այս շինարարությունը տեղական թուրք պաշտոնության ձեռքին առիթ էր ծառայել կեղեցելու համար հայոց վանքը. «Ով բազում անգամ քննութիւն արարեալ, հրաման տային նորոգութեան ամ ի ձեռնարկելն հայոց ի վործ՝ յարուցանէին վէճս և խոռովութիւնս, պատճառելով պատճառս, և խափանէին զգործն, որպէս յարտ առնեն բազմաթիւ գրեանք գատաստանի և այլոց վասն այսր»<sup>2)</sup>:

Ու թեև ի վերջո «հաճեցոյց զիամս նոցա՝ և աւարտեաց զնորոգութիւնն, կրելով վիշտս և զնեղութիւնս», սակայն ինդիրը քիչ հետո կրկին է արձարծվում նույն ձևով. «Իսկ այլագիր երուսաղեմի, որոց երկորրդ բնութիւն լեալ էր ագահութեամբ և պէսպէս բարանօք կորզել զգրամս ի քրիստոնէից, դարձեալ բոնացան ի վերայ միաբանացն Հայոց ի պատճառս նորոգութեան Ս. Փրկչի վանաց՝ զի ոմանք ասէին թէ ավելի քան զհրամայեալն շինեալ են զաւելորդ իրս, ոմանք թէ հակառակ է օրինաց մերոց, կամ զայլ իմն բանս յօդիքն»<sup>3)</sup>: Ս. Փրկչի այս ինդիրը տևեց մինչև Հովհաննեսի մահը, և նա մինչև վերջն էլ արիաբար պաշտպանեց հայոց շահերը, հաղթահարելով դժվարությունները, ուշ միայն կաշառի ուժով, որ, իհարկե, անխուսափելի էր, այլև գաղանաբարու, վայրենաբարու մարդկանց հանդեպ իր ունեցած շնորհալի և իմաստուն վերաբերմունքով:

1) Մենք վերաբազմեալ թարգմանում ենք (վերաբազմած, կրկին բազմած): Մեր հեղինակն այստեղ վեր գործ է ածել որպես մասնիկ, «վերստին, կրկին» և շահակութամբ, թեև արտասովոր է այդ, բայց նա սիրում է արդեն շատ ծանոթ բասեր գործածել արտասովոր առողջություն ունեցած ապամով, ինչպես արել է Գրիգոր Մագիստրոս:

2) Աստվածատուր եպսկ. Տեր-Հովհաննեսյանց, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղեմի, հա. Ա, էջ 411:

3) Անդ, էջ 411—412:

Ահա այդ մասին են, մեր կարծիքով, հետեւալ տողերը.

«Սպետափառ միշտ գու սագործ տեսարքն եղեալ, Սըրտացուցեր ըղձառադէմա յոյժ կաթոդ-նեալ» (Ա, 11): Այսինքն՝

«Թու գործերով տիրոջ նման դու միշտ փառվոր լինելով, Խոժուադեմ մարդկանց զմայլեցրիր ազրտապին սիրով»:

Հովհաննես Կոստանդնուպոլիսիցին իր պատրիարքության շրջանում պայտար էր ունեցել նաև լատինների և հունարի ոտնձգությունների ղեմ: Լատինները, որոնք, անտարակուս, ղեր էին ունեցել և Ս. Փրկչի վանքի վերահշշալ դժվարությունների հարուցման խնդրով, կաթոլիկ պետությունների ղեսպանների և նրանց ազգեցության շնորհիվ, 1691 թ. Հակառակություն էին սկսել հայերի ղեմ, ողի խորհին մերժել և խափառ զրկել զնոսա ի տնօրինական Ս. Տեղեաց և յսիշտապիկ զբաժնս նոցա, յօրէ օր սաստկացուցանելով զկոփն և զվէճն»<sup>1)</sup>: Իսկ Հայորդ տարին հունիները վերսկսել էին իրենց սովորական վեճերը հայերի հետ: Նրանք լուր էին տարածել պիրու թէ պատրիարքն Յունաց առեալ իցէ հրովարտակաւ զԱ. Յակոբ ի ձեռաց Հայոց, որ թեև ճիշտ չէր, ինչպես պարզվել էր հետո, բայց անուհանդեռձ դա մի հրովարտակ էր, որով հրամայվում էր ոյերեկոյի Ճրագալուցի Զատկին միայն պատրիարքն Յունաց և կամ փոխանորդ նորին մտցէ ի գերեզմանն Քրիստոսի, և այլք կացցեն արտաքանչ»<sup>2)</sup>: Հովհաննես Կոստանդնուպոլիսիցին լատինների և հունիների այս անիրավ ոտնձգությունների ղեմ արիաբար պաշտպանել էր հայոց իրավունքները երուսաղեմի դատավորի առաջ վավերագրերով և իր պերճարան լեզվով: Նրա այս գործերը հանդիսանում էին Հայաստանյաց նկեղեցու և նրա ունեցած դարավոր իրավունքների պաշտպանության ցայտուն փաստեր՝ ընդումայլագվան քրիստոնյաց համայնքների և իրավամբ նկատվում էին հայ քրիստոնեությունը պաշտպանով և նրա հավատի հիմքերն ամրապնդող գործեր: Այդ մասին են ներբողազրի հետևյալ տողերը.

«Իմանի դու հաստատող եղեր ընտրեալ, Ո՞վ մեղարդ լուսով փառաց փայլատակեալ» (Բ, 9):

Այսինքն՝

«Դու քնարվեցիր որպէս հավատի հաստատող,

1) Անդ, էջ 409:

2) Անդ, էջ 411:

Ո՞վ լուսին, որ փառքի լուսով ես փայլատակում»:  
Եվ կամ՝  
«Գամզագարիշ և ջատագով տէր դու յալտնեալ,  
Գըտար պայծառ քան զարուաեակն արփա-  
գեղեալ» (Ա, 19):

Այսինքն՝

«Տեր, դու հայտնվեցիր որպես հավատի  
հաստատոթյուն և ջատագով,  
Եվ գտնվեցիր ավելի պայծառ քան լուսա-  
գեղ արուայրակը»:

Նշենք, որ այս հոգենվեր շահագրդությու-  
նը, որ մենք տեսնում ենք Երուաղեմի  
պատրիարքի և նրա գործոնեալիքան վերա-  
բերմամբ Ամրտոլի միաբան Գրիգոր Շիր-  
վանցու մոտ իր այս տաղերում, բնավ ար-  
աւասովոր երևույթ չէ, որովհետև Ամրտոլցի-  
ները միշտ էլ մոտիկ են վանգնած եղել Եր-  
րուաղեմի գրղծերին: Այսպես, օրինակ,  
դեռ 1679 թ. Ամրտոլի առաջնորդ հոչակա-  
վոր Վարդան Թաղիշեցին, որ և մեր հեղինա-  
կի ուսուցիչն է, Երուաղեմի համար նվիրա-  
կությամբ Սպահան Լը վնացել<sup>1)</sup>: Նրա աշա-  
կերտ նույնպես հոչակավոր Հովհաննես Կո-  
լուտը, որ և մեր հեղինակի սիրասուն ընկերն  
էր և նրանից անբաժան է եղել Ամրտոլուա և  
հետագայուա, իր մասին խոսելով գոտում էր,  
թե Երուաղեմի աթոռի սերը միշտ կայր  
սևեեալ յոգի իմուս անարժանութեան..., «որ-  
պէս գրեթէ ի մանկութենէք»<sup>2)</sup>: Եվ մենք կար-  
ծում ենք, որ 1694 թ. գուցե և մի խմբական  
այցելություն կատարած լինեն Ամրտոլցիները  
Երուաղեմ, որ առթիվ և շարադրած լինի  
Գրիգոր Շիրվանցին իր երկու ներքողները:  
Այս ենթագրությանը տեղի են տալիս երկ-  
րորդ ներքոյի տնիքի սկզբնատառերը, որ-  
ունք հոդում են. «Ի ծառադից լու...»:

Տարաբախստաբար այս տաղի արտագրու-  
թյունը թերի է մնացել, քայլ այդքանն էլ  
բավական է տեսնելու համար, որ հեղինակն  
այդ շարադրել է ի դիմաց իր հոգեկից,  
մննդակից ընկերների, որպես տղերձ՝ Երու-  
սաղեմի պատրիարքին, նման առաջնին, որ  
իր կողմէց էր:

Գրիգոր Շիրվանցու ներքողների մեջ դեռ  
կան մի շարք մանր, բայց ուշագրավ, տեղեւ-  
կություններ Հովհաննես Կոստանդնուպոլիս-  
ցու կրանքի և վարքի մասին:

Ներքողակիրի խոսքերից մենք տեսնում ենք,  
որ այդ ժամանակ արժանավոր պատրիարքը  
առաջացած հաստիկի մեջ էր գտնվում:

1) Տե՛ս Հայկ. ՍՍՌ Պետ. Մատենադարանի № 7864  
ձեռագրի հիշատակարանը, թղ. 324ա:

2) Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ, որ կոչ  
գենոր, Կ. Պոլիս, 1719 թ., տեսնել հիշատակարանը:

«Ե՛ ծեր գերէրունակ յոյժ պասբովեալ»  
(Ա, 2):

Այսինքն՝

«Ո՞վ ծեր գերիմաստով, մեծապես փառա-  
վորված»:

Նրա անբասիր կյանքը, նրա հոգեկան ու  
բարյական արժանիքները հիացմունք են  
պատմառում հեղինակին: Խերթողագիրը  
նրան անվանում է այսու՝ «սուլը» (Ա, 5),  
ովկազ՝ «սուլը» (Ա, 24), անգլոս՝ «հրե-  
տակ» (Ա, 7), վերկեուզական՝ «երկինա-  
բանակ» (Ա, 6), մակու հոգի մեծ փաղերայ

(Ա, 10), և այլն: Գովերգուն նրան առաքի-  
նությունների և բարեմասնովիքունների գոյ-  
վարանման համար համեմատության եղբեր  
է փնտուռ թանկագին և ազնիվ քարերի  
մեջ, մեկը առ մեկ սարդիոն, տպազիոն, դա-  
հանձակ, կարկեհան, շափյուղա, հասպիս,

լիգիոնաքար, բյուրել (Ա, 3—14), նրան նմա-  
նեցնում է խոշոր գետերի, որպիսիններ են  
նեղոսը, Տիգրիսը, Եփրատը (Ա, 22, 29,  
30): Բացի սրանցից՝ նաև խոշոր դրվատիք-  
ներ ունի Երուաղեմի պատրիարքի մտավո-  
րական արժանիքների և կարողովիքան մա-  
սմին. Քեմաքան՝ «հուետոր» (Ա, 3), հոետոր  
կարոր՝ «մեծ հուետոր» (Բ, 1), վարժապետ  
բարգաւենեալ (Ա, 32), դարանու՝ «իմաս-  
տասեր» (Ա, 14), իրինու՝ «իմաստասեր»

(Բ, 1), պարմագոյն տէլէտ արի՝ «հզորա-  
գույն և արի գուփս իմաստասերների» (Ա,  
1), պարմինու բազ պարուզան՝ «հանճա-  
րեղ քաջ գիտնական» (Ա, 1), յայր յարա-  
նուն յանգաբանող՝ «կայտառ և խորաքնողո-  
քերթող» (Ա, 4), բերետդան յոյժ քանօտէն  
հանճարեղեալ՝ «ուոյժ բանիրուն և հանճա-  
րեղ վերծանող» (Ա, 15), խորին նախից վի-  
պարան ենրուդդան՝ «տորիմաց ճառերի վի-  
պարանող և վերծանող» (Բ, 3), յէֆրէ ծայ-  
րազնող բառից բանից շարամանեալ՝ «գրր-  
վածքների մեջ բառերի անքննելի մասերը  
վերծանող» (Բ, 8):

Ահա այն թանկարժեք պատմականը, որ  
գտնվում է Գրիգոր Շիրվանցի երկու ներ-  
բողական տաղերի մեջ:

Գալով երրորդ տաղին, պետք է ասել որ  
սա պվալի իրթին է քան նախորդները: Մրա-  
տների սկզբնատառերը հորում են՝ «Գրի-  
գոր»:

Հայտնի չէ, թե ե՛րը և ի՞նչ առիթով է գրր-  
վել այս տաղը: Թվում է, թե սա նույնպես մի  
ուղերձ է, որ հեղինակի կողմից կարուով  
և խոնարհական շեշտով ուղղված է: այն  
վարդապետներին, տրոնց ցանկալի խմբից  
ինքը գատվել է քախտի դժբախտ բերումով:  
Այդ միտքն են արտահայտում 2-րդ և 5-րդ

տները։ Մյուս կողմից 1-ին տան մեջ հեղինակն ասում է, թե ինքը այս տարր գրում է պանդիստության մեջ, լոյն գերութեալ։ Նա 4-րդ տան մեջ իր մասին ասում է զալուք-լալ ապանդիստած, նժողեացած։ իսկ 6-րդ տոմբ նույնպես ցուց է տաղիս, որ նա գտնվում է պանդիստության մեջ, բապազ հետոր բահաւետեալ՝ «նվաստ վարդապետ», որ հեռավից է հիանում։

Իրոք մենք գիտենք, որ Վարդան Բաղիշեցու մահից հետո (1705 թ.), Գրիգոր Շիրվանցին Ամրտոլից հեռացել է Հովհաննես Կոլոտի և ուրիշների հետ, «հողմավարմամբ իրու եղեալ տարաքեցիկ»<sup>1)</sup>, և այնուհետև շատ երկար տարիներ գտնվել է Թափառական պանդիստության մեջ։ Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարանի անտիպ նյութերից մեզ հայտնի է, որ նա մինչև իսկ գտնվել է Ղրիմում, 1712—18 թվականներին, գուցե դեռ այդ թվականներից մի քիչ առաջ էլ, ինչպես և մի քիչ հետո նույնիսկ անհավանական չէ, որ Շիրվանցին այս տալլը շարադրած լինի հենց Ղրիմում, որտեղ, մեզ հայտնի է, նա գրել է ուրիշ տաղեր ևս։ Մեր այս հնթադրությունը հիմնվում է նրա գործածած բահաւետեալ «հեռավից հիացած» արտահայտության վրա։

Այսպիսով, որեմն, Գրիգոր Շիրվանցու այս երրորդ տաղը, որի բովանդակությունը հեղինակի կյանքի մի դժբախտ շրջանին է վերաբերում և այդ տեսակիտից էլ շահեկան է, նախորդ երկուսի համեմատությամբ պավելի ուշ ժամանակի արտադրություն է, գրված, համենայն դեպի, 1705 թվից հետո և առաջ քան 1715 թվականը, երբ նա կոչվեց երուսաղեմի պատրիարքության։

Այս երեք խրնագան տաղերը, որոնք ձեռագրում խորագիր շումեն, հետևյալ սկզբնավորությունն ունեն։

(Ա տաղ) «Տաբուն ի տաբիրոնդ վերաբազմեալ» (թղ. 173ա—174բ)։

(Բ տաղ) «Երբինոս հոետոր կաթուր փարթամացեալ» (թղ. 175ա)։

(Գ տաղ) «Պորդ գորգաստինս գաղտ գաթ-դաթեալ» (թղ. 183բ—184ա)։

Հրատարակում ենք այս տաղերից առաջնը, նպատակ ունենալով նմուշներ ներկարացնել նրանքի անվանի պատրիարքներից Գրիգոր Շիրվայակի մինչև այժմ անծանոթ մնացած գրական գործերից, նմուշներ, որոնք, ինչպես տեսանք, միաժամանակ ուշագրավ են իրենց պատմական բովանդակությամբ։

Տաղերը ձեռագրում շումեն ինչպես խորա-

1) Գրիգոր պատմութեանց երկրին Տարոնոյ, որ կոչի գենոր, տեսնել հիշատակարանը։

գիր, այնպես և տների համարակալում։ Մենք մեր կողմից խորագրել ենք ըստ առաջն բառերի և համարակալել ենք յուրաքանչ ըուր տաղի տները։ Բնագրերը տաղիս ենք առանց որևէ փոփոխության։ Ուղղել ենք միայն անսովոր վանկատամները։

### ՏԱԲՈՒՆ Ի ՏԱԲԻՐՈՆԴ

(Հայկ. ՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 737):

1. Տաբուն<sup>1)</sup>ի տաբիրոնդ<sup>2)</sup> վերաբազմեալ. Ով պարմինուս<sup>3)</sup> քաջ պարուստան<sup>4)</sup> նորիսաբանեակ. Պարմագոյն<sup>5)</sup> տէլէտ<sup>6)</sup> արի պարիզացեալ<sup>7)</sup>. Նակետ<sup>8)</sup> նամեստական<sup>9)</sup> գեղիւ պըճնեալ:
2. Է ծեր գերէրոնակ<sup>10)</sup> յոյժ պասքովրեալ<sup>11)</sup>. Գեղուշէլ<sup>12)</sup> ծառ խընկաբեր գերազարդեալ. Մըխեալ ի քէն հոտ կընդդրկի մաքրասընեալ. Յորմէ զմայիմ ես քո՞ ծառալս յոյժ ներգկեալ<sup>13)</sup>:
3. Բափահակ<sup>14)</sup> բափաթդ<sup>15)</sup> ընտիր գեղազանեալ. Իբր գՄարդիոն<sup>16)</sup> շիկագունակ շնորհիւ լըցեալ. Գերյարգանօք պայժառութեամբ վեհ երկեալ. Մեղենիտար<sup>17)</sup> և բեմաբան<sup>18)</sup> բարովաւաճեալ:
4. Յայթ<sup>19)</sup> յարագում<sup>20)</sup> յանգաքանօղ<sup>21)</sup> փարթամացեալ. Կեհազնէից և դիցազանց դու ճոխ գլուխեալ.

- 1) Տարոն, իբր արտարև, տարարև, «տարաբնակ, տարագիր»;— 2) Տարիոն, «գահականդա»;— 3) Պարմիոս, «հանճարեղ»;— 4) Պարուստան, «գիտական»;— 5) Պարմագոյն, «հզորագում»;— 6) Տէլէտ, տէլէտիս, «գլուխի իմաստասերների»;— 7) Ուղեւի՝ պարիզացեալ, «բարձրացած»;— 8) Ուղղելի նակերտ, «զովվապետ»;— 9) Ուղղելի՝ նամերսական, «հալերժական»;— 10) Գերէրոնակ, «գերմաստում»;— 11) Պատմվեալ, «գիւակալուած»;— 12) Գեղուշէլ, «գեղեցիկ ոստեր ունեցող»;— 13) Մեղքենալ, «տկար, խոնարհ»;— 14) Բափահակ, «Աստուծով զրացած»;— 15) Ուղղելի՝ Բափահակ, «պատկեր»;— 16) Մարդիոն, մի տեսակ ազնիվ քար;— 17) Մեղենիտար, «գահակակ, պատրիարքական աթոռ ունեցող»;— 18) Բնաբան, «հուետոր», տվյալ գիւակալում կարող է և նշանակել «քմիթ» (գահից) պատգամող»;— 19) Յայթ, «կայտառ, իմաստում»;— 20) Յարագում, «ուղղելի» յարագում, «փարթամացնող»;— 21) Յանգաքանօղ, «տաղալափի», քեր-

- Տըպագիոն<sup>22)</sup> դու լուսափայի  
պայծառացեալ.  
Եգումենոս<sup>23)</sup> ոգույս մըթին եթի<sup>24)</sup>  
լոցեալ:  
5. Ո՞վ այիոս<sup>25)</sup> միշտ ուրգացօղ<sup>26)</sup> վեհ  
պանձացեալ.  
Ուղարամածիս<sup>27)</sup> յարաբեթեր<sup>28)</sup> միշտ  
երևեալ.  
Դու Դահանակ<sup>29)</sup> կամաշագոյն յար  
փըթթեալ.  
Մըշտասաղարթ բանիւ բազմաւ միշտ  
ուրճացեալ:  
6. Վախնախի<sup>30)</sup> վերնուշական<sup>31)</sup>  
վերաբենեալ.  
Վարսանաւետից<sup>32)</sup> դու յաղթող միշտ  
երևեալ.  
Ո՞վ Կարկեհան<sup>33)</sup> գեղիւ գունով յուժ  
կարմրացեալ.  
Հոգին ի քեզ ազդէ ըզշնորհս  
յորդորեցեալ:  
7. Անգեղոս<sup>34)</sup> ամենագան հրաշազարդեալ.  
Ալոցագոյն<sup>35)</sup> երկրի բերոյ  
գերբաստանեալ.  
Դու Շափիլայ<sup>36)</sup> ծիրանագոյն  
արտափայլեալ.  
Վարփեռոն<sup>37)</sup> տէր բարեի  
բարձրազարդեալ:  
8. Նէհեմիաս<sup>38)</sup> և նաբութէ<sup>39)</sup> դու նէ՛ր<sup>40)</sup>  
եղեալ.  
Ճըգուտեալու մեծ Կիպրացոյն  
գովարթադիմեալ.  
Կերպդ Յասպիս<sup>41)</sup> է յոյժ սարասիւ  
քատակեցեալ<sup>42)</sup>.  
Բարձրագոյն տէր բաղձակի  
մաքրազարդեալ:  
9. Նադաբի<sup>43)</sup> սուրբ Պըշտոյին  
նադամեցեալ<sup>44)</sup>.

- Շահապետ<sup>45)</sup> գանձուց նորին զքեզ  
կարգեցեալ.  
Ո՞վ Լիգրիոն<sup>46)</sup> ճոխափարթամ  
ակներևեալ.  
Տարիքէ<sup>47)</sup> ծառայ բարի տեսոն երևեալ:  
10. Էարդնապէս<sup>48)</sup> դու էաստող<sup>49)</sup>  
էապատուեալ<sup>50)</sup>.  
Թեռփիզէ<sup>51)</sup> մըտօք մաքուր միշտ  
պատուեցեալ.  
Գոճազմ<sup>52)</sup> ընտիր պայծառափայլ  
շնորհազարդեալ.  
Մաքուր հոգի մեծ փաղերայ<sup>53)</sup> յոյժ  
բարձրացեալ:  
11. Սպետափառ<sup>54)</sup> միշտ դու սափորդ<sup>55)</sup>  
տեսորն եղեալ.  
Սըրտացոցեր<sup>56)</sup> ըզձառադէմս<sup>57)</sup> յոյժ  
կաթոգնեալ.  
Ո՞վ ակն Յակինթ<sup>58)</sup> կարմիր գունոյ  
գեղեցկափայլ.  
Պարզ և մաքուր սուրբ հայեիի  
գերազարդեալ:  
12. Փաթուր<sup>59)</sup> յորդահոսան  
կալլակնեցեալ.  
Մէտ առ մէտ ծիծաղախիտ  
փատողացեալ<sup>60)</sup>.  
Յոսկեակն<sup>61)</sup> նըման դու ես փառօք  
յոյժ փառնեցեալ.  
Ճոխապատիւ և գերունակ շնորհիւ  
զցեալ:  
13. Աստուածակերտ այր պատուելի  
աստելորեալ<sup>62)</sup>.  
Արնօնակից<sup>63)</sup> մեծ արաստու<sup>64)</sup> վերնոց  
եղեալ.  
Ցեղոնկն<sup>65)</sup> նմանիս հրովն երկնայնով  
դու յոյժ շիկնեալ.  
Գերամաքուր և հոգեցի տէր  
բաղձացեալ:

Բողոք:— 22) Տպագին, մի տեսակ ազնիվ քար:—  
23) Եգումենոս, «առաջնորդ»:— 24) Երի, «տարա-  
կուանաթով»:— 25) Այխոս, «սուրբ», հոմ. «Ճշշուծ»:—  
26) Ուրգացող, «ուղղիչ»:— 27) Ուղարամ, «խամա-  
րամած»:— 28) Յարաբերե, «ըլույս»:— 29) Դահանակ,  
մի տեսակ ազնիվ քար:— 30) Վախնախի, «իսկա-  
պիսու»:— 31) Ուղղելի՝ վերնուշական, «երկնաքրէ»:—  
32) Վարանաւեա, «սանդարամետական»:— 33) Կար-  
կենան, մի տեսակ ազնիվ քար:— 34) Անգեղոս, «Ճրե-  
տակ». Հօմ. «Ճշշուծ»:— 35) Ալոցագոյն, «սննդա-  
րար», «պտղաթին»:— 36) Շափիլայ, մի տեսակ ազնիվ  
քար:— 37) Վարինն, «զարդարում»:— 38) Նէմե-  
միս, «միիթարություն»:— 39) Նարուք, «սորիչ»:—  
40) Նէր, նէր, «մեր»:— 41) Յասպիս, մի տեսակ ազ-  
նիվ քար:— 42) Քատակեցեալ, «նմանեցված»:—  
43) Նադաբ, «հարսնացած»:— 44) Նադա-  
մեցեալ, «հաճոյացած»:— 45) Նահապետ, «պետ, իշ-

խան, պահապան, վերակացու»:— 46) Լիգրիոն, մի  
տեսակ ազնիվ քար:— 47) Ուղղելի՝ տարեի, «ապ-  
նիվ»:— 48) Ուղղելի՝ էարդնեալս, «արդարապես»:—  
49) էաստող, «ժողովարար»:— 50) էապատուեալ, «ա-  
ռաջնորդի պատիվ» աստիճան ունեցող»:— 51) Թեռ-  
փիզէ, «աստվածասեր»:— 52) Գոնազմ, մի տեսակ  
ազնիվ քար:— 53) Փաղերայ կամ փաղերեայ, «վար-  
դապետ»:— 54) Սպետափառ, «փառակոր, պայծառ»:—  
55) Սպործ, «նմանագործ»:— 56) Մրտացուցանել,  
«սրտագին սիրով զմայեցնել»:— 57) Զարադէմ, «խո-  
ճուադեմ, անշնորհը գեմքով»:— 58) Յակինթ, մի  
տեսակ ազնիվ քար:— 59) Փարուր, «գետու»:— 60) Փա-  
տոլացեալ, «բարձրացած»:— 61) Ծիկակն, մի տեսակ  
ազնիվ քար, «ոսկեբարս»:— 62) Աստելորեալ, «զորա-  
ցած, ամրացած»:— 63) Արեօն, «ցիծացող», խալա-  
ցող քառից:— 64) Արասու, «շատ հաստատում»,  
գուցե և շշուտ առաքինիս:— 65) Եղունկն, եղունկն,

14. Դարանոս<sup>66)</sup> դայագ<sup>67)</sup> ընտիր փարթամացեալ.  
Հանդիճեալ<sup>68)</sup> մաքրագոնից պետացն ընտրեալ.  
Բիւրեղ<sup>69)</sup> օդանըման պարզ երևեալ.  
Գերագով հայր պարշալ<sup>70)</sup> յոյժ պանծացեալ:  
15. Եսի<sup>71)</sup> դու ետինոյ<sup>72)</sup> վարփեացեալ<sup>73)</sup> քերետղան<sup>74)</sup> յոյժ քանօրէն<sup>75)</sup> հանձարեղեալ.  
Յերկ վէշ<sup>76)</sup> ակունք նմանեցուցի զվեհոյ մեծարեալ.  
Ես քո ծառայ ցիծին<sup>77)</sup> ուգով ինքնեւեալ<sup>78)</sup>:  
16. Բարբայ<sup>79)</sup> ուասքով<sup>80)</sup> ուգոյս վիրօք խըլխայթեցեալ<sup>81)</sup>.  
Պայծառազարդ և ճոխաբան սաքովեցեալ<sup>82)</sup>.  
Դու ես հանգոյն մեծի աղբերն յորդահոսեալ.  
Որ յադինէ առ մեզ հոսի բառավտարած  
քառավտակ լեալ:  
17. Արեգովլթ<sup>83)</sup> հրաշատեսակ լուսաճնեմեալ.  
Ակն արևու ճոխ և փարթամ լուսով լըցեալ:  
Դու ես Փիսոն<sup>84)</sup> լայնատարած  
յսխորոտացեալ.  
Բերանդ հըրով սըրբոյ հոգոյն միշտ առլցեալ:  
18. Ցաքարէ<sup>85)</sup> ըզաքիսոնս<sup>86)</sup> սէր քո գովեալ.  
Առ ի պատուել ըզքեզ բանիւ զանազանեալ.  
Սակայն մըտօք եմ յոյժ մըթին  
անկղիտացեալ<sup>87)</sup>.  
Այլ աղերսնմ զքեզ արտասուօք  
զլոմայս<sup>88)</sup> ընկալ:

մի տեսակ ազնիվ քար, «եղնգնաքար»:— 66) Դարանոս, «իմաստասեր»:— 67) Լայագ, «բարփայելութ»:— 68) Հանդիճեալ, հանդիճեալ, «համեմատված»:— 69) Թիւրել, մի տեսակ ազնիվ քար:— 70) Պարչալի. զպանժալի:— 71) Սեփ, «ողիտապետ»:— 72) Ստին, «հայտաւու»:— 73) Վարփեացեալ, հավանաբար «զաքար» առաջած, հմմտ, «վարփեռն», «զաքարուն»:— 74) Քերետղան, «հավանաբար նոյն» հետորդան, «վերծանող»:— 75) Քանօրէն, «քաշարան», բանիրուն:— 76) Երկ վէշ, «տասերփուտ»:— 77) Ցիծին, «չուրբ»:— 78) Փերեխտեալ, վիեհերեալ, «փերպով ձևացեալ որ ու է» (ըստ Երեմիա վարդապետի բացատրության):— 79) Բարբայ, «մեր հայր»:— 80) Բախով, «հմուտ»:— 81) Խոյայրեցեալ, «թարախակալած, փերավորիմած»:— 82) Բախովեցեալ, «զորպավոր գարձած, զորացած»:— 83) Արեգովը, «երանություն, գովություն»:— 84) Փիսոն, եղեմական դրախտի չորս գետերից մեկի անուննէ:— 85) Յաքարել, «հոժարել»:— 86) Արինե, «աղբառատ»:— 87) Անկղիտանալ, «վատ բանի սեր կապել»:— 88) Լումայ, լումայ, «մանրագույն դրամ»:

19. Գամզագարիչ<sup>89)</sup> և ջատագով տէր դու յայտնեալ.  
Գըտար պայծառ քան զարուսեակն արփագեղեալ<sup>90)</sup>:  
20. Բահգոն<sup>91)</sup> էին մեսիայի բարձրազարդեալ.  
Գիշերավար<sup>92)</sup> լուսազըւար<sup>93)</sup> կերպիւ լըցեալ:  
21. Իհասաք<sup>94)</sup> իհըրացար<sup>95)</sup> պատուասիրեալ.  
Զրկայ Բաղդատ քեզ և նըման զարմէս ծընեալ:  
22. Գիհոնեան<sup>96)</sup> ջըրոյ սարաս պիտոյ եղեալ.  
Զովացուցիւ ախընթորիս<sup>97)</sup> գէեղադրեալ<sup>98)</sup>:  
23. Ո՞վ ովսադ<sup>99)</sup> յոյժ բարձրագոյն սաւառնացեալ.  
Ի քէն սարսի փոքրիկ թրոշունս ովրէացեալ<sup>100)</sup>:  
24. Բուզս<sup>101)</sup> յոյժ ահիւ է մեծապէս բահաւետեալ<sup>102)</sup>.  
Ընդ ովկիադիկ<sup>103)</sup> մեծագունոյ յառաջանալ:  
25. Իմունախոհ<sup>104)</sup> քաջ կաճիս<sup>105)</sup> պետ ուղիփափունեալ<sup>106)</sup>.  
Տէր այս անուն մեծ վարդապետ բարիօք լըցեալ:  
26. Ստորփայացեալ<sup>107)</sup> եղջերօրէն<sup>108)</sup> է տապացեալ.  
Սակս այնորիկ զոտդ համբուրէ յոյժ տողրեալ:  
27. Ներդաշնական ձայնիւ ուժին դու ես պատուեալ.  
Ըզտէրումեան աւանդն ողջոյն տէր իմ ընկալ:

խարերաբար գործածված իրր «շնչին՝ տուրք»:— 89) Գամզագարիչ կամ զամզազարիք, «հավատի հաստատություն»:— 90) Արփազեղեալ, «լուսավոր աստղերի գեղեցկություն ունեցող»:— 91) Բահզոն, «օրենող»:— 92) Գիշերավար, «լուսանթագ»:— 93) Հավանուրին պետք է կարդալ՝ լուսազուար, «լուսավոր»:— 94) Իհասաք, «լուսաին»:— 95) Անքացար, «ընտրյալ»:— 96) Գենոնեան, «հենանի, այսինքն՝ նեղու գետի»:— 97) Ալիբերուց, «անպիտան»:— 98) Գիհադրեալ, «վոփազած»:— 99) Ովսադ, «բազե»:— 100) Ովրէացեալ, «ովհնչ դարձած, ոշնչի հավասար»:— 101) Բուզ, «արուա, փանարի»:— 102) Բահեւետեալ, «հովից հիացած»:— 103) Ովփազայ, «զուրբ»:— 104) Խմենախոն, անծանոթ բառ:— 105) Կանիտ, «ուրբ»:— 106) Ովփափունել, «լուսավորել» (ըստ Երեմիա վարդապետի բացատրության). կարող է «զեպի լուս դիմել» նշանափություն ունենալ:— 107) Ստորփայացեալ, «նվաստացած, նվաստ»:— 108) Նղընեօրէն,

28. Էտայիաս<sup>109</sup>) էականին<sup>110</sup>) առ մեզ  
նկալ.  
Զրննէ զորկէնդ<sup>111</sup>) զոմգ<sup>112</sup>) քո ոտիցդ  
օղաճեմեալ:
29. Քորարայ<sup>113</sup>) դու ես հանգոյն  
առատացեալ.  
Քարայէլ<sup>114</sup>) ի վերայ քո միշտ և յաւէտ  
զքեզ պահպանեալ:
30. Ոմբն<sup>115</sup>) տեսլեամբ սուրբ և մաքուր  
ճոխաբանեալ.  
Իբըր զեփրատ ականակիտ յըստա-  
կեցեալ:
31. Սարամ<sup>116</sup>) ծիրանափայլ  
ծայրանացեալ<sup>117</sup>).

Շամածիւռ քաղընթատիկս<sup>118</sup>) քեզ  
ծառայեալ:

32. Աղիալիպտոս<sup>119</sup>) աէր վարժապետ  
բարգաւաճեալ:  
Աղեկայ<sup>120</sup>) լուսով վառաց գու երեսեալ:  
Ուեննայ<sup>121</sup>) ոգոյս իմոյ յոյժ թալկացեալ.  
Դու ի ծըրարս կենսատուին լեր  
պահպանեալ:
34. Այս ծիր ի թիւ միշի գոլով եղև ծըրեալ.  
Երկ և մու<sup>122</sup>) թըտով յանկիւ առաւելեալ:
35. Յօդլստոսի հընկիւ հընգեակ աւուրբք  
չափեալ:  
ՅԱփրոդիտեայ օրն՝<sup>123</sup> վեցշարթի<sup>124</sup>)  
բօթ<sup>125</sup>) անուանեալ:

անդերմի նման»: — 109) Էտայիաս կամ էտայաս,  
«Հրեշտակ», պաշտոնյա, առաքյալ»: — 110) Էտան,  
«Աստված»: — 111) Ուկեն, «ինչպիս առաջ»: —  
112) Ունգ կամ ունց, «փոշի»: — 113) Քորար, «Տիգ-  
րիս գեղը»: — 114) Քարայէլ, «Աստծու ձեռքը»: —  
115) Ումին, «մաքուր»: — 116) Սարամ, անծանոթ  
քառ: — 117) Սայրանացեալ, «հայտնիված»: — 118)  
Քաղերատիկ՝ քաղերատ կամ ավելի ուղիղ՝ քաղը-

նառ, «Թւլատ, կակազու» բառից: — 119) Աղիալիպ-  
տոս, «անձանձրույթ»: — 120) Աղեկայ, «ուժզիու-  
թյուն»: — 121) Ուեննայ, «ուրախություն»: — 122) Մու,  
տմի, «միկ»: — 123) Ափրադիտեայ օր, «ուրբաթ». լա-  
տիներենում՝ ուլորաթը կոչում է dies Veneris  
«Վենուսի» (Ափրոդիտեի; օրս: — 124): — Վեցշարթի,  
«ուրբաթ»: — 125) Հոգհաննես Վանականի ստուգարա-  
նությամբ ուրբաթքը՝ հայերեն նշանակում է «օր բա-  
թի»:

